

զիր արագատպի և տպարանական մամ-
լոյ*)՝ բաշխել յօգուտ Տպարանին և
յարդիւնաւոր յառաջադիմութիւն նո-
րին:

Վիայոյս գորով, զի Վեհափառ Տէրդ
խմ զգումարան զայնոսիկ՝ զորս նուիրեմ
յարդար վաստակոց իմոց, ընկալցի ի հա-
ճոյս իւր և համարեսցի առհաւատչեայ
մեծի համակրութեան իմոյ առ մենայն
մեծագործութիւնս իւր, որովք աստի զՎ-
թռուն զարդարեալ և վայելչացեալ, մը-
նամ

Վեհափառ Տէրութեանդ

Վեհախոնարհ Զատայ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆՅ.

Ի 15 Հոկտեմբեր 1874 թ.

Ի Ս. Էջմիածին և Վաղարշապատ:

Վսեմափայլ Յօնանեանցն սովաւ անշուշտ կցուցա-
նէ թէ՛ ո՛րչափ լաւ եւ հիմնովին կճանչնայ իւր ազ-
գին ներկայ դարուս մէջ ունեցած մտաւոր եւ բարո-
յական պահանջները եւ շատ ազգայիններէն աւելի հա-

սուն եւ նուրբ հեռատեսութեամբ զգացած է Ս. Ա.-
Թողոյս այն հողերը մեծ նշանակութիւնը, զոր ունե-
ցած է Սա ի հնումն եւ զոր ունենալոց է ի ներկա-
յումս եւ յաւէտ Ազգիս կրօնական զարգացման եւ
բարոյական դաստիարակութեան վերաբերութեամբ.
Նորա բարեարշտութեան եւ ազգասիրութեան այս
նշանաւոր քայլը, — որ թէպէտ առաջինն չէ իցոյց ազ-
գի վերայ ունեցած սիրոյն, — փոքր խրախոյս չէ մեր
Վեհափառ Հայրապետի համար եւս, որ իւր դո-
ժառնութիւններն եւ ձեռնարկներն յաջողութեամբ
պսակուած կհամարի այն ժամանակ՝ երբ այսպիսի
երեւելի ազգայնոց բարոյական ձեռնտուութեանց կը-
հանդիպի եւ կիսիթարի այն յուսով թէ՛ յարատեւ եւ
արդիւնաւոր կմնան նորա այսպիսի բարեւէր զգացմանց
մէջ եւ իւրեանց բարեգործութեանց կոթողները կանգ-
նելով առ դուրս նորոյս Սիօնի՝ կյաւելուն Ս. Ա.Թողոյս
պարծանքը, կխրախուսեն վաստակողաց սրտերն եւ
հողին՝ եւ անմահ յիշատակ անուան կժառանգեն ազ-
գային յիշատակարանաց մէջ:

Սիրելի՛ ընթերցող, քո Մայր Էջմիածին՝ Ազգասէր
Յօնանեանցի բազմարդիւն յիշատակները արձանազ-
րելով իւր ազգասէր որդւոց ցուցակին մէջ, անտա-
րակոյս է, որ դու եւս նորա փառաւոր անունը սիրով
տպաւորեցիր մտացդ ու սրտիդ մէջ, որպէս զի ըստ
քո կարեաց աշխատիս առ Ս. Էջմիածին ունեցած
պարտքերդ ճանաչել եւ եռանդնալից փութով կատա-
րել:

«Զի ուր դանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին»:

ՀԻՔԻԶՈՒԹԻՒՆ Ի ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

- (*) Ահաւասիկ աստուօր կճրատարակեմ Գ. Յօնանեանցի Տը-
պարանիս ի նուէր տուած պարագայից հաշիւը եւ ցուցակը.
- 1. Վասն 150 պուրակ (օգմայ) տպարանակ-
թղթոց (ի թ. 18) իւրաքանչիւր պուրակն 540
- 3 ր. 40 կ.
- 2. Վասն 200 պուրակ թղթոց (ի թ. 20) իւ-
րաքանչիւր պուրակն 5 ր. 50 կ. 660
- 5. Վասն 650 պուրակ թղթոց (ի թ. 24) իւ-
րաքանչիւր պուրակն 5 ր. 10 կ. 1955
- 4. Վասն այլ եւ այլ ծախուց (մտաշորի, թա-
ղիքի, խտրի, չուանի, կարեւրաթելի եւլն)
ի պէտս հակից թղթոց. 496 88
- 3. Վասն քանապարհամատց 640 փթ. թըղ-
թոց ի սրակվայէ ցՏփիտս, իւրաքանչիւր
փութն 1 ր. 80 կ. 4152
- 6. Վասն միոյ միջակադիր մատոյ (495 րր.)
եւ փոքրիկ արագատպի (688 ր.) ընդ
ծախուցն ճանապարհի ի Պերլինէ ցՍ. Էջ-
միածին, եւ արագատպին ի Լոնդոնէ
ցՓօթի, համայնն իմխոսին. 4185

Ներկայ թուոյս մէջ ակամայ և վիշտ
ի սիրտ պարտաւորուած եմք նորաբաց
Ճեմարանի վերայ պատահած տխրառիթ
մի ծանր դժբաղդութիւնը զուժելոյ, յորմէ
անշուշտ իւրաքանչիւր Հայ պիտի վշտա-
նայ և տրամի:

Ըմտոյս 16-ն էր՝ Չորեքշաբթի օր՝ մինչ
առաւուանց Եսիական Ժամ իրր 2-3ի
միջոցներում՝ Ճեմարանի մէջ աշակերտք

և դասատուք իւրեանց պարտաւորութեամբք զբաղեալ էին, արտաքուստ մի քանի անձինք վազ ի վազ կըսլանան դէպ ի ճ'եմարան և կիմացնեն տանեաց յարեմտեան կողմն ծուխ ինչ երևիլը, և ճ'եմարանի բակին արեմտեան կողմը կառուցուած նոր շինութեան աշխատաւորներէն մի քանի վարպետ անմիջապէս կղիմեն և կելնեն տանեաց վերայ:

Գոյժը կհասնի Ս. Էջմիածնի Ա. անուց մէջ ևս, և անտի թէ Ա. Եհարանէն, թէ Տպարանէն և թէ այլ աշխատաւորներէն՝ ինչպէս նաև ամբողջ Միարանութիւն Մայր Եթոռոյս՝ և հիւր գանուած Գեր. Մակար և Սարգիս Ս. Երբեպիսկոպոստէնք և Թաղէոս Ապիսկոպոս, և վսեմ. Գաւառապետ Խոնաղեանց իւր ստորագրելոց հետ՝ և Ա. զարշապատէն բաւական մարդիկ փութով հասած էին և հետզհետէ կհասանէին ի ճ'եմարան:

Յառաջահաս անձինքներէն ոմանք կարծելով որ ծուխը՝ հեռաբար նաև հուրն խոհանոցի ծխնելուզէն է, — որովհետև նմին մօտիկ տեղէն կելնէր ծուխը, — անմիջապէս կսկսանին երկաթեայ թիթեղները՝ տախտակները և շն քակելով ծըլնելուզի բոլորալիքը բանալ կրակը արմատէն այս ինքն է՝ ծխնելուզին կից տանեաց պարագաներէն գտանելոյ և շիջուցանելոյ ակնկալութեամբ, սակայն կրակն ոչ թէ ծխնելուզին կից, այլ բաւական վերև, այս ինքն՝ ծխնելոյն տանեաց կողմն հարաւային բաժանման մէջ լայնութեան միջակիտին մօտ կգանուէր, իսկ կրակն դէպ ի վեր հիւսիսային ծայրին մօտ էր, որոյ ներքև եղած (ձեմելիքի—սօֆա) կաճածեփ կամարին և տանեաց միջոցն կարի նեղ՝ իսկ դէպ

ի վայր (ձեմելիքը և սննեակները ի միմեանց բաժանող պատերուն վերայ) բաւական արձակ լինելով, կրակն դէպ ի արձակ կողմերն դիմած միջոցին՝ կարողացած է ծըլնելուզին մօտիկ տեղ գտանել և անտի ծուխ դուրս տալ, ինչպէս որ ականատես վարպետք պատմեցին, և երբ առանց կալեոր պտորաստութեան՝ ծխնելուզին շրջակայքը կբանան՝ կրակն աւելի օդ և հով կստանայ և կսկսանի արագ բորբոքուիլ և արծարծուիլ: Թէպէտ բաւական բազմութիւն հասած և դիզուած էր, այլ զրիթէ համայնն այսպիսի կրակին անսովոր և անսիրձ գոլով՝ մանաւանդ ոչ հրէջջ ջրհան, ոչ կացին և տապար և այլ յարմար գործիք՝ ինչպէս նաև ջուր կրելոյ ամաններ լինելով՝ բաց ի հողային կուժերէ, կրակին բոլորալիքը անմիջապէս փլուզանելով շիջուցանելոյ համար ևս ոմանց անխոնջ ջանքերն ապարդիւն կերթային այնքան՝ զի բազմավիշտ և սրտաբեկ յուսահատութիւնն համայնից վերայ կերուէր: Ի վերայ այսր ամենայնի՝ զարձակ ժողովուրդն՝ ձերք և երիտասարդք՝ անխոնջ ջանալով կաշխատէին մի կողմէն կրակը մարելոյ և միւս կողմէն մէջի համայն պարագայքը, հանդերձատան արկիները և ին մինչև դռները և մի քանի պատուհանները ազատելոյ:

Իսկ Ա. Եհ. Հայրապետ՝ բոլորովին երեսաց գոյնը շրջած՝ քալելոյ կարողութենէ զրկուած՝ սրտաթուռնդ և գողգոջուն՝ խալսու տխրազգեաց սրտիւ՝ մարելոյ վտանգի մջ տաղնապելով՝ աչքիւր արտասուօք լցուած՝ ամենեցուն կաղաչէր և կըյորդորէր աշխատել և միջոցներ ցուցանելով կջանայր կրակին ասջեր առնուլ:

Ուստի ժողովրդեան մեծ և եռանդուն մասն
 ևս աչք յարտասուս՝ և առաւել կարեւոր
 և կարեկից զդացմամբ ողի ի բռնին ունելով՝
 սկսաւ այլ միջոցներ ձեռք առնուլ, և երեք
 — չորս կողմէն՝ յարաաքուստ և ի ներքուստ
 կրակին շարունակութիւնը և տարածու-
 մը ընդհատելոյ համար անդ անդ թէ ի
 տանիս և թէ ի միջին՝ Հանդիսարանի դրան
 առջև եղած ձեռքեաց մասի տախտակամա-
 ծը կտրատել և քանդել: Հանդիսարանի
 և Հիւանդանոցի պատերուն բարձրու-
 թիւն և առանձին դիրքն թէ և զՂ' հմա-
 բան որոշ մասերու բաժանածի պէս էր,
 այլ ի ներքուստ ձեռքեքի տախտակամա-
 վրայով՝ և յարաաքուստ բոցին բորբոքն և
 տաքութիւնն ներդործելով երկաթեայ
 թիթեղներու վերայ՝ այրելով կրկնկիցներ
 և կրանայր ներքեի տախտակները, որով
 հետզհետէ տախտակներն ևս տաքանալով՝
 կրակէին. և ահա սոցա առջևը առնոյ
 համար՝ Հիւանդանոցի վերայ մարդիկ և-
 լած կրակին դէմ կհակէին և կժերով ջուր
 ստանալով՝ տաքութենէ և կրակէ ազատ
 կզահէին տանիքը՝ թէ և խառնաշունչ և
 հակառակ փչած հողմն՝ հրկիզութեան
 ծուխը նոցա վերայ շրջելով՝ կտառնայր
 խեղդել զնոսա: Ըստ այսմ՝ Հանդիսարանի
 կողմն ևս հակելոյ համար մարդիկ կպակա-
 սէին՝ մանաւանդ թէ այն կողմն խիստ եր-
 կիւղալի և վտանգաւոր էր, ևս եղած գոր-
 ծիքն անբաւական, որ միայն կուժերով
 ջուր պիտի հասցնէին և թափէին կրակին
 բոլորաթիւն: Ասան որոյ Հանդիսարանի մի
 կողմէն ևս երկաթեայ թիթեղաց ներքե-
 ւէն կրակն կարողացած էր կամարին վի-
 բայ սպրդել և աննշմարելի կերպով զբ-
 բէթի մէջէն այրել, որ Հանդիսարանի

մէջէն՝ գմբէթի ներքև խապաւ կաճած կի
 և քանդակագործ լինելով՝ չէր երևեր և
 կկարծուէր զե անվտանգ մնացած է, մին-
 չև որ գմբէթի մէջի կապ եղած կաղնեայ
 ամուր փայտերն այրելով՝ միանգամայն
 ամբողջ գմբէթն ահագին շառաչմամբ
 խոնարհեցաւ:— Այս միջոցիս՝ մի կողմէն
 յուսահատութիւնն և միւս կողմէն կարե-
 կից զդացմանց եռանդուն սէրն աւելի ևս
 գրգռուելով և բազմապատկուելով՝ ծայ-
 րայիղ ջանքեր ի գործ դրուեցան, այնքան
 որ կարողացան թէ տանեաց վրայէն և թէ
 ի ներքուստ հանդիսարանի դռան առջե-
 ւէն և նոյն ուղղութեամբ ներքին յար-
 կէն կէտ նպատակի դրուածին համաձայն
 կրակին դէմ կատաղութեամբ մաքաւել՝
 գործիք ունենալով միայն՝ կուժերով
 և պղնձեայ ամաններով ջուր թափելը և
 թիակներով հողախառն (ցիխտ) ջուր
 նետել կրակին մօտեցած անգուանքը,
 միանգամայն վերնայարկի՝ հանդիսարանի
 դռան մերձ կտրուած տեղէն՝ թրջած գոր-
 գով՝ հանդիսարանի ներքին յարկի Ղ' հ-
 մարանի մէջ բանած գունէն դուրս ելած բս-
 ցոյն դէպ ի ներքին յարկի առաստաղը
 յառաջանալոյն և բռնկցնելոյ սպառնալեաց
 արգելք դրին:

Այսպիսի ջանիւք՝ հակառակ ոմանց
 յուսահատ բանից՝ երեկոյեան դէմ ա-
 սիական ժամ 10ի միջոցներում՝ կրակի
 կատաղութիւնը հանդարտուեցաւ, և
 Ղ' հմարանի կէս մասն ազատութեան շա-
 ղին մէջ մտաւ: Ուստի ժողովուրդն ուրա-
 խութեամբ լցուած այնքան ոգևորեալ էր՝
 որ սկսաւ վտանգին առաջը բոլորովին
 առնոյ համար՝ թէ հանդիսարանի ներ-
 քիւ և խոնարհած և այրուող փայտերը՝

է որ կհասյրեաց՝ է որ ամբողջ կրակ դարձած կտորները՝ տաք երկաթները և ըն դուրս քաշել և արտաքին բակին մէջ նետել: Յայսմ պահու սրարշաւ հասան Արեւանի արքունական պաժարնէ կոչուած հրէջ խոււմին իւր զլեւուորի հետ, որ քառասուն հոգիէ կրողկանային՝ և հետներն ունէին մի քանի բահ, թիթեղեայ դոյլ և մի երկաթ խիւնէ կոչուած: — Սոքա առտուանց կրակին նոր սկսած միջոցում՝ Գաւառապետի կողմանէ խորհուած յատուկ սուրհանդակաւ կոչուած էին—: Այս խոււմբէս միանալով և զոգցէս նոր ոյժ տալով վաստակարեկ աշխատաւորաց՝ ջրով և բահերով կրակին վրտանդաւոր եղած տեղեաց մէջ մտան և մարելով՝ և կհասյրեաց փայտերը արտաքրս քաշելով և նետելով՝ գիշերոյ առաջին պահու ժ. 1¹/₂-ին բաւական ապահովութիւն տեսնուեցաւ կրակին դէմ: Արով արքունական հրէջ խմբին կէս մասը յԱրեւան վերագառնալով՝ մնացեալն՝ և նոցա հետ մերձ յիսուն հոգի պահապան դրուեցան, և մինչև առաւօտ հսկելոյ համար կարեւոր այլ պարաստութիւնքը ևս կարգադրած՝ ժամ ձիշտ 3 ին՝ Ա. և հ. Հայրապետ վերագարձաւ ի Ա. հարան՝ գիշերապահներու հետ ի Ղեմարանի թողլով զոմանս ի Միաբանից՝ և զիւր հոգեսուն որդի Ստեփան Ապիսկոպոս Սանտարձեան, որք մինչև ցառաւօտ հրսկեցին*):

(*) Ոչ սակաւ մտիթարութիւն է և այս՝ զի կրակն զիշերայն չպատահեցաւ և աշակերտաց և այլոց աշխատաւոր մարդկանց կորուստ և վնաս ինչ չգիպաւ:

Ղեմարանի այրեցեալ մասին մէջ հըրկիզեցան Հանդիսարանն, երկու Անջարանք, Հանդերձատունն, Սեղանատունն, Խոհանոցն, Տնտեսատունն, տնտեսի սենեակն, վերին և ներքին յարկաց հարկաւորք և լուսցարանք, լուսցատունն, Հանդիսարանի ներքեւ եղած ի պէտս վերակացուաց յատկացած երկու սենեակք: Իսկ ազատեցեալ մասին մէջ մնացին Հանդիսարանի դիմաց երկու սենեակէ բաղկացեալ Հիւանդանոցն, Սերտարանն, ամբողջ դասարանք, վարժապետական Խորհրդարանն, Տեսչի սենեակն, և այլ երեք սենեակք և մի պահարան:

Արդ այս դժբաղդ արկածին հարուած որբան ևս Գառն հազար մանէթէն աւելի նիւթական վնաս տուաւ Ս. Լ. ջմիածնի և Ա. զգիս՝ ևս բարոյապէս բաւական մեծ վիշտ և տրամութիւն տալուորեց Ա. և հ. Հայրապետի՝ ինչպէս նաև համայն ողջամիտ և ճշմարիտ Հայոց սրտից մէջ, սակայն սոքա երբէք չպիտի զօրին և ոչ ինչ վրահատութիւն չպիտի ներգործեն ինչպէս որ ներգործած չեն Ա. և հ. Հայրապետի մերում, ընդհակառակն՝ առաւել ևս ոգեւորուելով և գօտէպնդուելով՝ առ Աստուած ապաւինուած պէտք է ջանալ նպատակը և ձեռնարկուած մեծ գործը՝ առանց ընդհատելոյ և թուլանալոյ՝ շարունակել և արդիւնաւորել: Ուր եռանդուն սէր և հաստատամիտ նպատակ կայ, անդ վհատութիւն չկայ և ամեն արգիլք և արկած կյաղթուի, և այս բազմիցս ապացուցեալ է բազում օրինակօք: Ա. և հ. Հայրապետ՝ առանց երբէք վհատելոյ՝ և բազում խնամօք և տաժանամբք՝ երկարժամանակեայ խորհրդովք և պատրաստու-

Թեամբ յարդարած և ի գործադրութիւն բերած բուն և նուիրական նպատակը՝ յաւէտ ապաւինելով առ Աստուած և Ազգիս համակրութեան և ձեռնտուութեան՝ ինչպէս նաև Օգոստ. Ասյսեր Ռուսաց բարեմիտ ակնարկութեան և խնամոց հանդիպելով՝ պիտի շարունակէ և Աստուծոյ յաջողութեամբ պիտի արդիւնաւորէ, ինչպէս որ փորձով ևս կտեսնուի, զի ճ'եմարանի կէս մասին այրուելէն զկնի՝ հազիւ մի քանի օր անցաւ՝ Ս. Լջմիածնի Ազգարապատ հիւրանոցը *) ի ճ'եմարան փոխարկեց և աշակերտները տեղաւորեց, ուր իւրեանց պարտաւորութիւնքը կկատարեն և կշարունակին: Այսպիսի հանդամանաց մէջ անդւոյ անձկութիւն և այլ ինչ ինչ անյարմարութիւնքն ներկիւն են: Այլ ոչ միայն այսչափ. այլ և Արեւանայ նահանգին արքունական ծարարապետը հրաւիրելով և ճ'եմարանի այրեցեալ մասին ամբողջ պատերուն հաստատութեան և անփնաս մնացած լինելոյն վերայ ապահովուելով՝ զկնի կարևոր խորհրդածութեանց ընդ որոց արժան էր՝ յիշեալ ճարտարապետի հետ ի ստորև հըրատարակեալ պայմանը կռեցաւ, որով արդէն վերաշինութեան նախապատրաստութիւնք սկսուած են և 2¹/₂ ամիսէն զկնի այս պայմանի մէջ յիշուած մասերը աւարտուելով՝ այնուհետև մնացելոց համար ևս կարևորը կհոգացուի. որով Աս-

տուծով մինչև յառաջակայ տարւոյ Յունիսի ցվերջ՝ ամբողջ վերաշինութիւնք կաւարտուին և աշակերտք գոնէ յաշնանն էր փոխադրուին ի ճ'եմարանական շէնքն: Մեր խօսքերը կնքելէ յառաջ կբաղձամք յայտնել և անշուշտ կյուսամք նաև, զի այս առթիւ մեր սիրելի եղբարք ևս կփութան կարեկից լինել և դարձեալ կարևոր եղած օժանդակութիւնը առատաձեռնելով՝ արդեամբ կպարզեն իւրեանց զգացմունքը և համակրութիւնքը, որում անտարակոյս եմք՝ զի մեր Ազգ. Թերթերն ևս կձայնակցին և յորդոր կկարգան՝ ինչպէս որ արդէն Մեղու Հայաստանի լրագիրն ՉՉրդ Թուոյն մէջ այսպիսի բարի նպատակաւ յառաջնութաց հանդիսացած էր, որով մեր շնորհակալութիւնը ևս զբաւեց:

Ահաւասիկ արքունական — նահանգական ճարտարապետի հետ կապուած պայմանին պատձէնը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ի 1874 ամի ի 25-ն Հոկտ. ես ստորագրեալս ի սմին նահանգական Երկուշափի Ապպիտան Ա. օրօնցով վիւթամիտով կռեցի զայս պայմանագիր ընդ Սինօզին արոց Էջմիածնի յայնմ, թէ՛ ընդունիմ յիմ վերայ զամենայն շինութիւնս յիշատակեալս յեղեալ ի սմին հաշուէցոցակի ամբողջութեամբ Եօնն հողք հինգ հարիւր ուրբեօք ի վերայ հետեւեալ պայմանաց. նախ ի պարտատուութիւն նիւթոց, ես պարտաւորիմ ձեռն արկանել անցապաղ և յանդ հանել զամենայն շինութիւնս յընթացս երկու և կէս ամսոց յօրէ կըռեւոյ զգաշն զայս. եթէ լիցին խառնակ աւուրք (անձրեպին) յայնժամ թիւք աւուրք յաւելու պարտին առ ժամագրեալն միօրոց աւարտման շինութեանն, երբ որ դնին յիմ պարտաւորութիւն և հետեւեալ գործք, արկանել շրջանակ գերանս (նալ), արկանել զգերանս առաստաղաց և յատակաց վերին յարկի ի վերայ համայն արեցեալ մասին ճեմարանի բաց ի Հանդիսարանէ որոց գերանքն պարտին վնիլ մի արշին հետաւորութեամբ ի միմեանց և ունել առաջինքն զհաստութիւն 5 վերջօկ (մաս) և զլայնութիւն

(*) Եթէ հարկ լինէր՝ Ա. հ. Հայրապետ պարտաւորստ էր իւր բնակած վիւթանք ի ճեմարան փոխարկել՝ անձկալով յաւէտ՝ զի նուիրական ազգօգուտ նպատակը և ձեռնարկութիւնը չընդհատուի և Յօնանու զգմունցն չնմանի:

3 վերջով, և վերջինքն՝ հաստութեամբ 6 վերջով և լայնութեամբ 4 րնդ նմին գերանքն րնդ նայեցն պարտին ամրապնդեալ լինիլ գամիւք: Երբ որ շինել զկամարս ի միջին ձեմելիս զնեով առ այն զյիսուն կարապարս ամրապնդեալս երկաթեայ օղակօք, շինել զտրապիլս (գերանակապս) ի գերանաց բաց ի գմբեթէն, չորս վերջօք հաստութեամբ երեք վերջօք լայնութեամբ այնպէս զի ձև տանեացն լիցի բողբոջիմբ յարևմտն միւս մասին (որ չէ պրեցեալ): Ծածկել զտանիս տախտակօք հաստութեամբ կրեք քառորդ վերջօք, ծածկել զտանիս թիթիղամբ ներկելով զայն յերկուս նուազս. իսկ զմնացեալ մասն մի անգամ՝ կանանչագոյն ներկիւ ձիթով կտաւատի կցել զառատաղսն վերնայարկի քառորդս, որք պարտին լինիլ տաշեպք, և ունիլ զհաստատութիւն երեք չերթվերդ վերջօքի: Զորբօք պարաւորութեան իմեւ՝ վերաբերի նաև շինութիւն վերելակաց և բարձրագոյցանել ըզ փայտս ի վերայ տանեաց, և շինել խողովակս ջուլց: Զինչերբօք՝ ամենայն շինութիւնք պարտին լինել կատարեալ ըստ ամենայնի բարեպէտ և եթէ յոտի ինչ երևեցի կամ անկանոն՝ զայնուիկ շինութիւնս պարտիմ՝ շինել կամ ուղղել յիմ հաշիւ վերստին: Գամենայն փայտեղէնս պարտիմ գործածել յիղենեայ փայտից բերելոց ի Տիխիսայս և եթէ գործադրելոց զբարտի փայտս յայնժամ պարտաւորիմ՝ վասն իւրաքանչիւր բարտնի գերանաց գործադրելոց ի պէտս շինութեանց՝ վաճարել ի տուպանս զհարիւր ուրլիս: Վեչերբօք՝ եթէ վանքն կամիցի՝ ունի իրաւունս ալ ինձ ըզ փայտ և գերկաթ թիթեղեայ, յորոց զառաջինն ես պարտաւորիմ՝ ընդունել ըստ գնահատական հաշուեցուցանիլն միայն քսան տոկոսեաց զիջողութեամբ: քանզի վրայտնս պարտ է տաշել մինչ զեւ ի Տիխիսայս ընդունելոց եմ՝ զտաշեպսն: Ե՛ւ Վեչերբօք՝ վասն ընդունելութեան փայտի և երկաթեղեայց, ես պարտիմ՝ տալ զանգորրսգիրս, ըստ որոց պարտին զեղջիլ յինէն ի ժամ հաշուատեութեան: Ուրեքերբօք՝ փայտք և երկաթք՝ զորս տացէ ինձ վանքն՝ պարտէ վանքն ինքնին հասուցանել ի տեղի շինութեան: Ինչերբօք՝ ի պէտս պատրաստութեան նիւթոց՝ ես պարտիմ ստանալ ի կռնն զայս պայման զերկու հազար ուրլիս, և յետ այնր տուջութիւն մնացեալ դրամոց պարտի լինիլ հիտեալ կարգաւ: զինի գնելոյ զգերանս առատադաց և յատակաց հազար ուրլիս, զինի շինելոյ զտրապիլս՝ զերկու հազար ուրլիս իսկ մնացեալ դրամքն յաւարտ շինութեանն: Եւ Տուրեքերբօք՝ պայմանս այս պարտի պահպանել սրբութեամբ և անդրժեյի յերկուց պայմանագիր կողմանց. իսկականն սորին պարտէ մնալ ի Սիսոյին և պատճէնն յանձն ինի ինձ:

Բաց յայտոցունց շինութեանց ես պարտաւորեմ զնել զգերանս յատակաց առաջի հանդիսարանադրանս ուղղել զվիջնամպայն սանդիսոց և թիւրաթեք կողմանց, զորս և յնուլ ի սիւնն՝ որ յանկիւնս

սանդիսոց. փայտ վասն այսոցիկ շինութեանց պարտի գործադրիլ ի վանուցն իսկ արհեստաւորք և երկաթեայ պարապքն յինոց սեպհականութեանց: (Սորբօքն ինչն)

ՎԱՐԱՆՅՈՎ ՎԻՆԵՄԻՆՈՎ.

ՍՈՒՐԶԱՆԴԱԿԲ ԲԻԷՉԱՆԴԵԱՆ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ամեն. Ս. Պատրիարքը զգալով որ՝ Ընդհանոր Ժողովոյ ենթարկուած անկարգութեանց զխաւոր պատճառը անոր ներքին կանոնադիր մը չունենալն է խնդրեր է Ռուսինեան էֆէնտիէն որ սահմանադրական ազգաց Ընդհ. Ժողովոց ներքին կանոնադրութիւններէն քաղելով մեր Ընդհ. Ժողովոյ յարմար կանոնադրութիւն մը խմբագրէ ու Ընդհ. Ժողովոյն վաւերացմանը ներկայացնէ. նա ալ ամենայն սիրով յանձն առնելով այդ աշխատութիւնը՝ կանոնադիր մը խմբագրեր, իւր ծախքովը տպագրել տուեր և երեսփոխանաց հաղորդեր է:

Այս պէտքը ժամանակաւ Ընդհ. Ժողովն զգաց և ի պաշտօնէ իւր առաջին Ատենապետը գտնուող Օտեան էֆէնտիէն խնդրեց, որ այդպիսի կանոնագիր մը խմբագրէ ու Ընդհ. Ժողովոյն բերէ. նա ալ խոստացաւ քիչ ատենէն Ընդհ. Ժողովոյ այդ խնդիրը կատարել. վրան 6-7 նիստանցաւ բայց այդ խոստման գործադրութեան գոնէ նշոյլը չը տեսնուեցաւ, ուստի հարցնուեցաւ Օտեան էֆէնտիի թէ ե՞րբ պիտի բերէ այդ խոստացած կանոնագիրը. պատասխան տուաւ թէ՛ չէ կրցած Եւրոպական խորհրդարանաց ներքին կանոնադիրը ձեռք ձգել, որ իւր ըրած այդ խոստումը կարենայ կատարիլ. այս յայտարարութեան վրայ խնդիրը առ կախ ձգուեցաւ և Ընդհ. Ժողովն իր անկարգութեանց մէջ յառաջացաւ, որոյ վերջ պիտի տրուի հարկաւ Ռուսինեան էֆէնտիի կանոնադիրն ընդունուիլը:

Այս պատմութեանէն ահաւասիկ յայտնի կը տեսնուի թէ՛ Ռուսինեան էֆէնտիի ըրածը ոչ ալ ինչ է՝ բայց եթէ Օտեան էֆէնտիի պաշտօնական դատապարտութիւնը, զի նա որ Ատենապետական պաշտօն ու հանդիսաւոր ըրած խոստում ունէր ու չը գործադրեց, սա Ատենապետական պաշտօն և հանդիսաւոր խոստում չունենալով՝ սոսկ Ս.